ՁԵ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 24

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի գլխավոր հատակագծի տեքստային մասի փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի գլխավոր հատակագծի տեքստային մասի հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-057-0357-0023, 07-057-0357-0083, 07-057-0357-0060, 07-057-0357-0058 կադաստրային ծածկագրերով հողամասերում գլխավոր հատակագծով նախատեսված բնակելի կառուցապատման հատվածներում վերը նշվածից բացի նաև բազմաբնակարան բնակելի տներ:	07-057-0357-0023, 07-057-0357-0100 կադաստրային ծածկագրերով հողամասերում գլխավոր հատակագծով նախատեսված բնակելի կառուցապատման հատվածներում վերը նշվածից բացի նաև բազմաբնակարան բնակելի տներ:
07-057-0357-0023, 07-057-0357-0083, 07-057-0357-0060, 07-057-0357-0058 կադաստրային ծածկագրերով հողամասերի գլխավոր հատակագծով նախատեսված բնակավայրերի բնակելի կառուցապատման հատվածում վերը նշվածից բացի նաև շենքերի և շինությունների, բազմաբնակարանների հարկայնությունը և բարձրությունը բոլոր հիմնական կառույցների համար մինչև յոթ հարկ (ներառյալ 7-րդ հարկը), բարձրությունը հողի մակերևույթից մինչև հարթ տանիքի վերևը՝ ոչ ավելին քան 27 մ, մինչև լանջավոր տանիքի տիպը՝ ոչ ավելին քան 29 մ:	07-057-0357-0023, 07-057-0357-0100 կադաստրային ծածկագրերով հողամասերի գլխավոր հատակագծով նախատեսված բնակավայրերի բնակելի կառուցապատման հատվածում վերը նշվածից բացի նաև շենքերի և շինությունների, բազմաբնակարանների հարկայնությունը և բարձրությունը բոլոր հիմնական կառույցների համար մինչև տասնչորս հարկ (ներառյալ 14-րդ հարկը), բարձրությունը հողի մակերևույթից մինչև վերելակի հորանի և տանիքը սպասարկող սանդղավանդակի հարկի հարթ տանիքի՝ ոչ ավելին քան 49.5 մ:

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տրամադրված պայմանը (կցվում է),

4. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ջրվեժ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, « 25 » «հունվարի» 2023թ.